Կարծիք

Իզաբելլա Կարենի Մանուկյանի «Կլաստերային մոտեցումը որպես տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևոր նախադրյալ (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

21-րդ դարի տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ գործընթացների անկայունությունը պահանջում է, որ երկրները գործադրեն ակտիվ քայլեր՝ մրցակցային պայքարում կենսունակությունը պահպանելու համար: Մասնավորապես, առաջանում է երկրի ներուժի առավել օպտիմալ օգտագործման անհրաժեշտությունը: Թաքնված ներուժը հաճախակի կուտակվում է տարածաշրջաններում և կարող է բացահայտվել միայն առաջադեմ ռազմավարության շնորհիվ: Տարածաշրջանային զարգացման կլաստերային մոտեցումը նման խնդիրների լուծման արդյունավետ գործիք է:

Փոքր և միջին ձեռնարկությունների կլաստերավորումը կարևորագույն նախադրյալ է՝ պետական ներուժը բացահայտելու, տարածաշրջանային անհավասարությունները նվազագույնի հասցնելու, զբաղվածության խնդիրները լուծելու, տնտեսական աճն ապահովելու, տարածաշրջանը ապրանքային բրենդի (ապրանքի և/կամ ծառայության) տեսանկյունից ճանաչելի դարձնելու և պետության մրցունակությունը ամրապնդելու համար:

Այսօր տարածաշրջանային ՓՄՁ-ների զարգացման կլաստերային մոտեցման գործիքակազմը կիրառվում է բազմաթիվ երկրներում: Սույն գործընթացի խթանման նպատակով Եվրոպայում, Ասիայում, ինչպես նաև Հյուսիսային ու Լատինական

Ամերիկայի մի շարք երկրներում ձևավորվել են կլաստերային կոմիտեներ և մշակվում է կլաստերային քաղաքականությունը:

Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները նշում են ՓՄՁ-ների կլաստերավորման հեռանկարային հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Փոքր և միջին ձեռնարկությունները կազմում են ՀՀ բիզնես սուբյեկտների գերակշիռ մասը, և նրանց դերը երկրի ֆորմալ զբաղվածության մեջ բավականին մեծ է: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ կլաստերների ձևավորման դեռևս բավարար չափով չուսումնասիրված և չիրացված ներուժը դարձնում է սույն հետազոտությունն ու վերլուծությունը ավելի արդիական և կիրառական:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների ներուժի վերլուծությունն ու գնահատումն է՝ փոքր և միջին ձեռնարկությունների կլաստերների ստեղծման համար:

Հետազոտության օբյեկտն են հանդիսանում ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունները: Հետազոտության առարկան ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացումն է՝ տարածաշրջանային կլաստերների ստեղծման միջոցով:

Հետազոտության նպատակին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կլաստերային կառուցվածքների բնույթի և դրանց բազմաչափ էության տեսական ասպեկտները՝ կլաստերային տեսության և պրակտիկայի ծագման առանձնահատկությունները հասկանալու և ժամանակակից կլաստերների՝ որպես բարձրագույն բազմաչափ կառուցվածքների, առանձնահատկությունները բացահայտելու համար,

- ուսումնասիրել տարածաշրջանային կլաստերների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները՝ բիզնեսի կլաստերավորման ժամանակակից մոտեցումները որոշելու և ամենատարածված մոդելները համեմատելու համար,
- ուսումնասիրել նորարարական փոխակերպումը՝ բիզնեսի կլաստերավորման վրա դրա ազդեցության համատեքստում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական ներուժը ժամանակակից պայմաններում՝ տարածաշրջանային անհավասարությունները և ընդհանուր արդյունաբերական միտումները բացահայտելու համար,
- կատարել զարգացած և զարգացող երկրներում (գինեգործության և զբոսաշրջության ոլորտում) ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային լավագույն փորձի վերլուծություն,
- կատարել զարգացած և զարգացող երկրներում (գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական վերամշակման և գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի ոլորտներում) ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային լավագույն փորձի վերլուծություն,
- դիտարկել Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարածաշրջանային ներուժի բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելու մեթոդաբանության կիրառման հեռանկարները,
- իրականացնել գնահատումներ՝ Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ կլաստերավորման տարածաշրջանային ներուժը բացահայտելու համար՝ հաշվի առնելով տարբեր մեթոդաբանությունների կիրառումը՝ ավելի հուսալի արդյունքներ ստանալու համար,
- դիտարկել հնարավորություններ Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերի ձևավորման համար:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են.

1. Մշակվել է նորարարական կլաստերների սահմանում՝ հիմնված հետևյալ՝ գործոնների վրա. նորարարական արտադրանքի ստեղծում, եռակի պարույրի (triple helix) բոլոր կոմպոնենտների ընդգրկում, խաչվող ոլորտների (cross-sectoral industries) ներկայացուցիչների ներառում կլաստերների անդամների կազմում, միջազգային որակի ստանդարտների ներդրում, լոգիստիկ շղթաների ամրապնդում և տարածաշրջանների բրենդավորում:

2. Մշակվել է տարածաշրջանային ՓՄՁ կլաստերների ստեղծման համար տարածաշրջանների ներուժի գնահատման նոր մեթոդաբանություն՝ հետևյալ տարրերի ներառմամբ. որակական և քանակական նպատակների ալգորիթմացում, չորս քայլից բաղկացած գնահատման ընթացակարգի մշակում և բիզնեսի կլաստերավորման ներուժի գնահատման հաշվարկի նոր մատրիցային ձևով մեթոդիկա՝ փոխկապակցված եռակի պարույրի բաղադրիչների հետ:

3. Առաջադրվել և կիրառվել է համալիր մեթոդիկա՝ ՀՀ մարզերի ՓՄՁ-ների կլաստերավորման առավել մեծ ներուժ ունեցող մարզերի հայտնաբերման համար, օգտագործելով միջազգային ընդունված (տնտեսական գործակիցների հաշվարկ) և նոր մատրիցային գնահատման մեթոդները՝ հաշվի առնելով դրանց ՓՄՁ սուբյեկտների առավել բարձր ակտիվությունը:

4. Միջազգային առաջատար փորձի ինտեգրմամբ, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ պայմանները, մշակվել է ՓՄՁ տարածաշրջանային կլաստերի տարբերակ, որի հիմնական ոլորտներն են գյուղատնտեսությունը (միջուկը կազմում են Արմավիրի և Արարատի մարզերի ՓՄՁ սուբյեկտները) և զբոսաշրջությունը (միջուկը կազմում են Վայոց Ձորի մարզի ՓՄՁ սուբյեկտները):

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, սահմանվում են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվում է հետազոտության արդյունքների գործնական արժեքավորությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերները և դրանց զարգացման առանձնահատկությունները 21-րդ դարում»*** գլխում ուսումնասիրվում են կլաստերային կառուցվածքների բնույթի տեսական ասպեկտները և դրանց բազմաչափ էությունը, բացահայտվում են փոքր և միջին ձեռնարկությունների տարածաշրջանային կլաստերավորման առանձնահատկությունները և ներկայացվում թվային փոխակերպման համատեքստում ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերների զարգացման առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ ***«ՀՀ տարածաշրջանային ներուժը և միջազգային առաջադեմ ՓՄՁ կլաստերավորման փորձը»*** գլխում ներկայացվում է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական ներուժի վերլուծությունը ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման համատեքստում, զարգացած ու զարգացող երկրներում ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային առաջադեմ փորձի վերլուծությունը (գինեգործության և զբոսաշրջության ոլորտում) և զարգացած ու զարգացող երկրներում ՓՄՁ-ների տարածաշրջանային կլաստերավորման միջազգային առաջադեմ փորձի վերլուծությունը (գյուղատնտեսական արտադրանքի արդյունաբերական վերամշակման և գյուղատնտեսական կենսատեխնոլոգիայի ոլորտներում):

Ատենախոսության երրորդ՝ **«Կլաստերային մոտեցման կիրառման հեռանկարները ՀՀ-ում տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման համար»** գլխում առաջարկվում է նոր մեթոդաբանական մոտեցում՝ ՀՀ-ում ՓՄՁ կլաստերավորման առավելագույն ներուժ ունեցող տարածաշրջանների ընտրության վերաբերյալ որոշումներ կայացնելու համար, ներկայացվում է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների կլաստերավորման տարածաշրջանային ներուժի գնահատում՝ օգտագործելով միջազգայնորեն ճանաչված մեթոդաբանություն և նոր առաջարկվող մեթոդաբանություն, ինչպես նաև բացահայտվում են ՀՀ-ում տարածաշրջանային ՓՄՁ կլաստեր ձևավորելու հնարավորությունները:

Աշխատանքի արդյունքների հիման վրա ներկայացվում են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքի 2-րդ գլխում հեղինակը գնահատելով ՀՀ մարզերի ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների ներուժը (էջ 45-47), մասնավորապես աղյուսակ 5-ում ներկայացնում է բնակչության բնական աճը 2023թ.-ի համար՝ ծնելիության և մահացության տարբերության հաշվարկի մեթոդով: Կարծում ենք, նախ բնական աճն ավելի հստակ պատկերացնելու համար ճիշտ կլիներ տվյալները ներկայացվեին առնվազն 5 տարվա կտրվածքով, 2-րդ՝ աշխատանքային ռեսուրսների ներուժը ժողովրդագրության տեսանկյունից գնահատելու համար բացի բնակչության բնական աճի, զբաղվածության և գործազրկության գործոններից, պետք է դիտարկվեր նաև այնպիսի ցուցանիշներ ինչպիսիք են մշտական և առկա բնակչության թիվը, աշխատունակ տարիքի բնակչության թիվը, բնակչության ծերացման ինդեքսը, երիտասարդների մասնաբաժինը աշխատունակ բնակչության մեջ, որպես ապագա ռեսուրս և այլն:

2. Աշխատանքի 2-րդ գլխի 2.1 ենթագլխում և 3-րդ գլխի 3.2 ենթագլխում գնահատելով համապատասխանաբար մարզերի Կրթական - գիտահետազոտական ներուժը և «Գիտություն» բլոկը, հեղինակը սահմանափակվել է միայն մարզերում կրթական և հետազոտական կենտրոնների ֆիզիկական ներկայության առկայությամբ, այնինչ կարծում ենք որ նախ կրթական բաղադրիչի ներուժի գնահատման համար պետք է դիտարկվեր տվյալ մազերից տարեկան քանի երիտասարդ է ընդունվում երևանյան կրթական հաստատություններ, ինչ մասնագիտություններով և որ ամենակարևորն է, նրանցից քանիսն է վերադառնում իր մարզ:

Ինչ վերաբերում է գիտահետազոտական կենտրոնների առկայությանը մարզերում, կարծում ենք այստեղ ևս պարտադիր չէ որպեսզի այդ կենտրոնները ֆիզիկապես լինեն տվյալ մարզում՝ նրանց հնարավորություններից և ծառայություններից լիարժեք օգտվելու համար:

3. Աշխատանքի 3.2 ենթագլխում հեղինակն ըստ իր կողմից առաջարկվող մեթոդաբանության իրականացնում է տարածաշրջանային ներուժի գնահատում, որտեղ «Պետություն» տարրի 1.3 (էջ 107) ենթակետով գնահատում է երկրի համագործակցությունը միջազգային խոշոր կազմակերպությունների հետ: Կարծում ենք այս բաղադրիչը գնահատելու համար ավելի նպատակահարմար կլիներ, որպեսզի հեղինակը ոչ թե բոլոր մարզերին շնորհեր 1 միավոր, այլ ներկայացներ թե ՀՀ կառավարության կողմից օտարերկրյա կազմակերպություններից ստացված միջոցներն ըստ մարզերի ինչպես և ինչ նպատակների համար են բաշխվել:

4. Նույն ենթագլխի «Բիզնես» տարրի 2.2 ենթակետի (ենթակառուցվածքների ներուժ) գնահատման ժամանակ ըստ մարզերի ներկայացրել է գյուղատնտեսական նշանակության հողերի մեծությունը (աղյուսակ 46): Սակայն աղյուսակի մեկնաբանությունից պարզ չէ այս մեծության մեջ մտնում են մարզերի ենթակայության տակ գտնվող բոլոր հողերը թե միայն նրանք որոնք փաստացի օգտագործվում են գյուղատնտեսության մեջ: Այս հանգամանքը կարևոր է ներուժի գնահատման

տեսանկյունից, քանի որ գաղտնիք չէ, որ ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության վարելահողերի մոտ 50% չի վերամշակվում, ինչը նշանակում է, որ թեև նրանք կարող են ներուժի գնահատման մաս կազմել, սակայն դրանց «աշխատանքային վիճակի» բերելը բավականին դժվար, ծախսատար և ժամանակատար գործընթաց է և պետք է դիտարկվեր նաև այդ գործընթացի արդյունավետությունը կլաստերի համար:

5. Կարևորելով աշխատանքում հեղինակի կողմից արված վերլուծությունները և առաջարկությունները ՀՀ մարզերում մրցունակ կլաստեր ստեղծելու ուղղությամբ, կարծում ենք աշխատանքն ավելի կշահեր եթե հեղիանկը դիտարկեր նաև որոշակի առանձնահատուկ, մրցակցային առավելություն ապահովող մասնագիտացմամբ կլաստերի ստեղծման հնարավորությունը, քանի որ հաշվի առնելով ՀՀ տարածքային սահմանափակ հնարավորությունները հակապես գյուղատնտեսական ոլորտում, այլ հավասար պայմաններում մրցակցային առավելություն չենք կարող ունենալ տարածաշրջանի այլ երկրների հանդեպ:

Եզրակացություն

Ներկայացված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը և հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը:

Իզաբելլա Մանուկյանի «Կլաստերային մոտեցումը որպես տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևոր նախադրյալ (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, որով ստացված արդյունքները կարող են նպաստել ՀՀ-ում ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների լուծմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի տպագրված 10 գիտական հոդվածներում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Իզաբելլա Կարենի Մանուկյանի «Կլաստերային մոտեցումը որպես տարածաշրջանային փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևոր նախադրյալ (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՊՏՀ Գիտության բաժնի պետ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Տ.Ս. Մարտիրոսյան**

ՏԻԳՐԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ գիտական քարտուղար **Ն.Հ. Դարբինյան**

«23» հունիսի 2025թ.